



ՏՆՕՐԻՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 30

✠ ՇԱԲԱԹ ✠

22 ՄԱՐՏ 1908

ԱՐԱՋՆԱԿԱՐԳ ԺԱՄԱՑՈՑՆԵՐ

ԶԵՆԻԹ

ՄԱՍԿՆԱԿԱՐԳ ԽՈՒՈՂՇՈՒՄ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՅ ԵՒ ԸՆԿ.

Պաշտ-Դարու, Օռոգախ-Պաք հաստատութեան դէմ, Թիւ 16

Հատոր 40 փաթա

(آ. آصاوریان) شرکت صنیعہ مطبعہ سی — باب مال جادہ سندہ نومبر ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի ճառարի քիւ 52



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լուս. մեքենայ մը ունենալ, որովհետեւ լուս. մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տագնապի ազդեցութիւն մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՊԱՆՈՍՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
վիտրինայի մեքենաներ
կը գտնուին

մեքենան լուսագոյն է. սոյն մեքենան ամենէն կաթարի լուսագործութեան, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց հէջ:

ՆԱԲԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱԴԱՆՈՒԹՅԱՆ

- | | |
|---------|--|
| ԲՆՐԱ | (1. Մեծ փողոց, Պօս Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Մէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՍՏԱՐ | Զարը Պօյու, թիւ 120 . |

Կասաբեայ երաժիշտութիւն

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւղօլլայի ուղին:



ԱՐՆԻԿԵԼՔ ՕՐԱՆ

Թերթ ազգային, գրական եւ ֆաղափական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ համար 80 դրշ. վեցամսեայ 45 դրշ. գաւառներու համար տարեկան 108 դրշ. վեցամսեայ 60 դրշ. և օտար երկիրներու համար տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ վաճառում՝ քաւք փառա: ԱՐՆԻԿԵԼՔ հրա լարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խընտաւալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐՆԻԿԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ըլլալու հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ անտարմաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բացի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ եւայլն:

ԱՐՆԻԿԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն ու բաժանորդագրութեան շնորհիւ Տէր և Տնօրէն Գարեգին էֆ. Պօյաճեանի հասցէին, Ղալաթիա, Մահմուտիէ Ճատտէսի, ուր հաստատուած են թերթին տպարանն ու խմբագրատունը:



ՏԵՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 30

ՇԱՐԱԹ-

22 ՄԱՐՏ 1908



ՎԻՐԱԲՈՒԺԱՄԵՏ ԱԶՆ. ՏՕԲԹ. Մ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՆՇՏՐԱԿԻ ՄԱՐԴԸ

Ամէն արուեստ կամ գեղարուեստ իր ՄԱՐԴը ունեցած է պէտք է ըսել: Եթէ Այվազովսքի՝ վրձինի, Աղամեան՝ բեմի, Պետրոս Դուրեան՝ զգացումի և տաղի, Պէրպէրեան՝ ուսուցման, Շամտանճեան՝ առեւտուրի, Սեպահ՝ լուսանկարի, Խորասանճեան՝ ներքին հիւանդութեան մարդիք են, վիրաբուժապետ Տօքթ. Զարդարեանն ալ նշտրակի ՄԱՐԴը պէտք է հռչակել՝ և ամենայն իրաւամբ:

Շատեր կան՝ որ բժշկութեան կը հետեւին, և քիչ է թիւը անոնց՝ որոնք վիրաբուժութեան պէս ծանր գիտութեան մը հետամուտ կըլլան, բայց ասոնց մէջ տաղանդներ չատուղ կը ծնին, որպիսի է այսօր Տօքթ. Զարդար՝ մեր Ս. Փրկչի հաստատութեան վիրաբուժապետը, որ նոյն պաշտօնին կոչուած է նաեւ Բերայի Ս. Յակոբայ Հիւանդանոցին մէջ:

Տօքթ. Զարդարի համար յղացուած է կարծես virtuose անունը, որ շատ սին ու փուռ տեղը կը գործածուի յաճախ: Քանի քանի Ղազարոսներ կան այսօր՝ որոնք հիմա սեւ հոլին կեր էին դարձած, եթէ Զարդարի նշտրակը իր փրկարար դերը կատարած չըլլար հիւանդին վրայ:

Այսօր վիրաբուժութիւնը, անուրանալի է որ՝ ներքին բժշկութենէն աւելի մեծ յաջողութիւններ ըրած է: Այսօր շատ դիւրին է հիւանդ մը ամբողջ ժամ մը նշտրակին և փռօծօռմին ենթարկել և կատարել գործողութիւններ, որոնք թէեւ նախապէս սոսկում՝ բայց շատ քիչ ժամանակի մը մէջ կարենոր արդիւնքներ ձեռք կրնան բերել, և Տօքթ. Զարդարեան այդ գործին մարդն է՝ նշտրակի մարդը:

Ս. Փրկչի հաստատութիւնը, մեր այս անգուգական օբեկաքեօնը վիրաբուժապետի պաշտօնին կոչելէն ի վեր, պէտք է ըսել թէ հրաշքներ գործած է հոն: Եւ կարծէ գրտնուիլ ու մօտէն տեսնել իր գործելու եղանակը լապտաքուառին մէջ: Միշտ գուարթ,

միշտ կայտառ, մեքենական արագութեամբ մը այնպիսի գործողութիւններ կը կատարէ՝ որոնց ի տես մարդ կ'ապշի կը մնայ: Վարժ մատներով պրպրտել մարդուս ներքին նուրբ գործարանները, կտրել, հանել, կտրել և բուժել, ահա ինչ որ կըլլուի ու կանցնի սեղանին վրայ, ուր կուգայ իր կեանքը վաստակիլ անյոյս խեղճ հիւանդը:

Ս. Յակոբայ Հիւանդանոցը անգամ մը եւս կը շափ համբաւ ու գնահատում այս վերջին կարգադրութեամբ, որով Տօքթ. Զարդարի պէս տիպար վիրաբուժապետ մը կը հրաւիրէ այցելել:

Երանի թէ ամէն անոնք՝ որոնք ո՛ր և է հիւանդութեամբ մը պէտքը զգան նշտրակին, փոխանակ հոս հոն, ասոր անոր թերի հմուտութեան խաղալիք ըլլալու, որոշեն ուղղակի դիմել բուն արուեստագէտին, չուտ, դիւրին և ան ցաւ բուժուելու համար անողոք վերքերէն:

Զարդար մը ունինք արդէն, երանի թէ Զարդարներ ալ հասնէին մեր մէջ:

Բայց պէտք է աւելցնել այս առթիւ թէ մեր անստգիւտ վիրաբուժապետը՝ ո՛չ թէ միայն իր համայնքին, այլ օտարազգիներուն ալ ճանչցուցած և սիրցուցած է ինքզինքը, այնպէս որ, ամէն անոնք, որոնք ծանրածանր վիրաբուժութեան մը պէտք ունենան՝ Տօքթ. Զարդարն է որ կը կանչուի, անոր խորհուրդը առնելու և ըստ այնմ հիւանդը իր ճարտար և հրաշագործ նշտրակին յանձնելու համար: Ահա այս պարագան անգամ մ'ալ կը շեշտէ համբաւաւոր օբեկաքեօնի կարողութիւնը և շահած անունը:

Կրկին և կրկին կը շնորհաւորենք Ազն. Տօքթ. Զարդարեան էֆէնտին և կը փափաքենք լսել օր քան զօր իր վիրաբուժական հրաշքները, թէ՛ Ս. Փրկչի հաստատութեան և թէ՛ Ս. Յակոբայ հիւանդանոցին մէջ:

Վ. Փ.

ԳՈՒՄ-ԳԱԲՈՒՑԻ ԿԻՆԸ

[Յ Ա Ն Թ Է Զ Ի]

Աղանիի պէս միամիտ, ջորիի նման աշխատասէր և նորմանտիական ձիու մը հանգոյն լայնանիստ է Գուժ-գարուցի կինը:

Վագր կը կտրի երբ իրեն կը մօտենաս... առանց կանխակալ հաւանութեանը:

Կիրակիէ կիրակի մազերը կը սանտրէ:

Նաւավարի մը պէս հայհոյել գիտէ և բռնակրի մը պէս կոշտ պատասխաններ կուտայ:

Իր զբաղմունքներն են՝ տունը, տեղը, չօնուխին քեփսին, վարժարանի ամսականներուն ելլալը կամ չելլալը, դրացիներուն շարաթը քանի՞ օխայ միս ուտելը, Տիկին Նեկտարին քանի խնայ չամաւոր ունենալը և սա Մաննիկին քանի ամսու յղի բլալը:

Իմացականութիւնը այնքան ցած է որքան Նեղոս՝ Մայիսի մէջ:

Իր զբօսատեղիներն են, եկեղեցին և հորին գլուխը:

Շարաթ իրիկուն վիզը, մազերը, թեւերը կը լուայ և իր էրկանը ըստին թէփսին կը պատրաստէ:

Ստէպ բաղնիք կերթայ և այնքան կը քերթուի որ դուրս ելած ատենը կարծես մարմինէն մաս մը հոն թողած է:

Պէյ օղուի ջլթիկները կըսէ՝ երբ խօսքը Բերայի կիներուն վրայ է:

Աստուած նախ Գուժգարուցի կինը ստեղծած է և ապա զիջիմ ետղը տղաման:

Հարսնութենէն աւելցած գունաւոր ճանֆէս ֆիստան մը և խաթիֆէ երկայն բօլֆա մը ունի զորս աւագ օրերուն մէջտեղ կը հանէ:

Այդ ֆիստանը և այդ բօլֆան, յաւիտենականութեան հետ գրաւ դրած են՝ երկարակեցութեան recordը վաստկելու համար:

Իր ամբողջ գոհարեղէնը կը կազմեն՝ էլմաս կիւլ մատնի մը որ կնքահօրը ընծան է և էլմաս երկայն օղբը զորս կեսուր օլանախը առած է իրեն:

Նոր խորոված մսին « աղջիկ մ'եւելնար »

կըսէ՝ Գուրգէնի չափ գրաբառ գիտնալ կը կարծէ:

Քովէն լասթիկով բօթին կը հագնի՝ Աստուածատուր Պատրիարքին օրէն ի վեր:

Ամէնքն ալ Այվաղեանը կը ճանչնան:

— Բա վո՛ւյ, խազէթաճի էղեր է, վայ գլխուն, տահա քանի տարի է քի ինծի եագմա կը պերէր:

Շարաթ իրիկուններէր էրկանը հետ բախի կը խմէ:

Մեծ-պահքի եօթը շարաթները Ս. Գրքին պահանջած կերպովը ժուժկալութեամբ կանցընէ:

Քրօքն՝ իրենց համար բանաստեղծութիւն մըն է, քրօշէ կայ սեղանին, աթոռներուն, քանարէին, պուռօին, մահճակալին և շապիկներուն վրայ և հոն՝ ուր գուլպաները կը վերջանան:

Իրենց գիտցած երգն է Չափրաստճեանի « Դուք մէջէն ես քովէն »ը:

Նաւապետին վաքօնի կըսեն և ծխախոտի տուփին « Թիւթիւնիւս բօրթմէն »ը:

Քառսուն տարեկան ըլլալուն բարակ պելս մը ունենալ կսկսին:

Եթէ երբէք սիրալին յարաբերութիւններ ունենան, կամ վարդապետի հետ է և կամ դեղագործի: Խախուտ գործի ձեռք չեն զարներ:

Ահագին կերպով լեղակ կը դնեն լուացքնուն մէջ և անտանելի կերպով ձերմակ՝ այտերնուն վրայ:

Տակէն եօղան միսօ կը հագնին ձմեռը:

ՎԱՐԺԱՊԵՏԸ

Քրիստոսի աշակերտները՝ Պոլսոյ վարժապետներէն աւելի ստակ կը շահէին նոյն իսկ այն ատեններն երբ երեք հատ ձուկ ուտելու համար հինգ հազար հոգի մէկտեղ սեղան կը նստէին:

Ամսականը չորս հարիւր դրուշ ըլլալուն պէս՝ ակնոց գործածել կսկսի Պոլսեցի վարժապետը:

Վարժապետներուն համար այն է հոգաբարձուն՝ ինչ որ է Պիզմարք Ֆրանսացիի մը համար. դգալ մը ջուրի մէջ կը խղզեն:

Վարժապետին սփռածն է շոյս, կերածը
բոյս, սիրածը կոյս և դրամագլուխը յոյս :

Որքան փնտռեց ցախախոյս,
Բաղդը այնքան կուտայ խոյս :

Իր ամբողջ իտէալն է ձեռք մը նոր հա-
զուտտ, մետաքսէ հովանոց մը և արծաթ ժա-
մացոյցին ոսկի չղթայ մը :

Այս փափաքով կը մեռնի :

Վարժապետին էն մեծ արդուզարդն է
կծչիկին ներկը :

Կնկան մը հետ խօսած ժամանակնին կաս
կարմիր կը կտրին :

Վարժապետի հետ թուղթ խաղացած ու-
նիք : Հինգ հազար բուհեով պէզիկի բարքի
մը սովորաբար 25 վայրկեան կը տեւէ, իսկ
վարժապետի հետ 2 ժամ և 34 վայրկեան :

Կիրակի օրերը անպատճառ եկեղեցի կեր-
թայ ... Թաղական խորհրդարանէն ներս
սկնարկ մը նետելու համար :

Ալեծածան քաղուածք մը ունին որ մի-
միայն իրենց յատուկ է :

Փողկապը շարունակ օծիքէն վեր կը մա-
զուցի :

Ֆրանսերէնի դասեր կուտայ և գաղղիա-
ցիի մը հետ տաճկերէն կը խօսի :

Իրեն համար Վիքթոր Հիւկո ոտանաւոր
չինող Աստուած մըն է :

Վարժապետը կառք նստելու համար պէտք
է որ թաղին մէջ հարուստի մը յուզարկաւո-
րութիւնը տեղի ունենայ :

Հիմայ չեմ գիտեր, բայց իմ ժամանակս
վարժապետ չկար որուն ոտքերը ... պեր-
ճախօտութիւն չունենային :

Եւրոպական վարժարաններու տիմար ա-
շակերտները՝ աղգային վարժարաններու մէջ
վարժապետ կըլան :

Փրկիչը իրենց ասպարէզին Hôtel Ter-
minus է :

Շատակեր կըլլան, բայց քիչով կապրին :

Աշակերտը «միւսիւ» կըսէ իրեն, թաղա-
կանը «պարոն», տնտեսը «պատուելի» և զո-
քանը «էֆէնտի» :

Յ. Ա. ՓԻՍՐ

ՓՇՐԱՆՔՆԵՐ

Յ. Ա. ՓԻՍՐԻՆ

— Սերը լափող կրակ մ'է, որքան շուտով
վառի ու այրի այնքան շուտով կ'մարի :

— Մեր մտքին մէջ տիրող սերը հեռացը-
նել ուզելը՝ մեր ստուերին արգիլել է որ ա-
րեւին չերեւայ :

— Սերը կրակի կ'մանի, որքան ծած-
կելի այնքան կ'դիմանայ :

— Սերը սրտին մէջ աւելի դիւրաւ կ'մտնե-
րան քե հովը բաց պատուհանէն ներս :

— Անհմարին է սիրահար եւ խոհեմ ըլլալ
միանգամայն, ինչպէս անհմար եւ մեր յար-
գելի «Լիլա» ին գրածները առանց խնդալու
կարդալ եւ ընթերցողներուն ալ քիւր գիտնալ :

— Լաւագոյն դասերը եւ խրատները ի-
մասունք թմբուկի ձայն եւ սիրահար մար-
դուն համար :

— Սերի սիրահարները սեխերու պէս են,
յիսուն հաս կտրէ՝ լաւ մը հազիւ կ'եղի :

* * *

Բօլոյաին

— Կանանց նենգութիւնը իրենց սարիներ-
ուն հետ կ'աւելնայ :

— Կնոջ մը սիրքը երկնքին մէկ մասն է,
բայց երկնքին պէս ալ գիշեր ցերեկ կ'փոխ-
ուի :

— Կանայք զմարդիկ իբր խաղի բուդբե-
նկատելով՝ ժամանակ մը անոնցմով կ'խաղան
եւ կը նետեն զանոնք :

— Կինը ականջով ընտելու է եւ չէ քե
աչնով :

— Կիները՝ զիրենց շուտօրէն ճամարու-
թիւն մը մէկէն կը կլլեն, իսկ իրենց նկատ-
մամբ դառն ճամարութիւն մը՝ կաթիլ առ
կաթիլ :

— Կնոջ մը ամենէն վնասակար անդա-
մը իր լեզունն է :

Իզմիր

ՅՈՎ. Հ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

ԿԱՎՌՕՇԱՊԱՏՈՒՄ

«ԻՏԷԱԼԻՆ ՆՏԵԼԵՆ»

Անշուշտ իմացաք էք — եթէ կը հետաքրքրուիք գրական գործերով — թէ այս տողերը գրող ձեր նուաստ ծառան՝ «Իսեալին Նտելեն» անուն երգիծական վէպ մը ունի, որ «ի մօտոյ» հրապարակ պիտի ելլէ ... 1907ի Հոկտեմբեր ամիսէն ի վեր՝ Նշան-Պապիկեան մատենադարանի կողմէ:

Հոկտեմբերէն ի վեր սաակ նանկ վեց ամիս անցաւ, բայց տակաւին «ի մօտոյ» հրապարակ ելլելիք վէպէս լուր մը չկայ:

Շատեր, որոնք գրատունի մը կողմէ խոստացուած գիրքի մը հրատարակութեան հաւատալու չափ մանկական միամտութիւնով օժտուած են տակաւին, կը հարցնեն ինծի:

— Ինչ եղաւ ձեր Իսեալին Նտելենը:

— Ի մօտոյ կը պատասխանեմ:

Եւ որովհետեւ «ի մօտոյ» անոր թուական մը չէ երբէք, իմ վէպս ալ կը մնայ «ի մօտոյ» ի տարտամ անորոշութեան մէջ:

Բայց որովհետեւ խոստացուած և յաւիտենապէս հրապարակ չելած վէպս կրնայ արտատաւորել իմ պատիւս, որուն մասին բժախընդիւր եմ ամիսքան, կը փութամ բացատրել այս յապաղումին պատճառը:

* * *

Ամառուան տաք օր մըն էր, մէկը ա՛յն տաքերէն՝ ուր աշխարհիս է՛ն հմայիչ կիները անգամ կը սկսին ... հոտիլ:

Մանգումե՛ հակա-թօլաեաններու գոհացում տալու համար — աս ալ Բասիմին գիւտըն է — անաքիմա կարգացած էր ինծի և թատրոնը չաքայտական հազիւ 47 1/2 դրը կը հայթայթէր, որովհետեւ բո՛ւն սեղօնը չէր սկսած տակաւին, նկատի առնելով որ դերասանի մը համար՝ տարուան ինը ամիսը բո՛ւն սեղօնը սկսած չըլլար միշտ:

Հետեւաբար, հակառակ Հայերու ... Մոլիէրը ըլլալուս, կը գտնուէի «ա՛խ կիլիսիսի» լիճակի մը մէջ, բռնագատուած տունն բան-

տարկուելու, մինչ ամէն մարդ լանտօներով Բեաղըտիւնէ կ'երթար փարա ուտելու:

Ճիշտ այն ատեն միտքս ինկաւ ամբողջովին գրականութեան նուիրել ինքզինքս, — Գրականութիւն՝ Գ տանկոյս:

Մինչեւ այն ատեն լրագրական օրը օրին գրականութիւն մը ըրած էի, այժմէութիւններու վրայ հիմնուելով լոկ և գրածներս սահմանուած էին, աւա՛ղ, կորանելու, Արիկ Մուպահեմեանի Պատրիարքարանի լուրերուն և Տիգրան Արփիարեանի օրուան տեսութիւններուն նման:

Այն գրողը որ կ'ուզէ անմահութեան մէջ թիկնաթոռ մը գրաւել, պէտք է սնպատճառ հատոր մը շինէ:

Միսաք Մեծարենց, Մեր. Պարսամեան, նոյն իսկ Պ. Սոկրատ Սարաֆեան, որոնք մէյմէկ հատոր շինեցին՝ անմահ են այսօր, մինչդեռ Յ. Ալփիար, Վահան Փափաղեան և ես խեղճ մահկանացուներ ենք, որովհետեւ ո՛չ մէկ հատորի վրայ մեր անունը ունինք արձանագրուած:

Ինչ փոյթ թէ օխաներով ձեռագիր թըխած ըլլանք, որոնք կորսուած են լրագիրներու և պարբերականներու հեւքին մէջ:

Արդ՝ իմ կարգիս, անմահանալու համար, չարաթ մը տունս նստեցայ և արտադրեցի ... Իսեալին Նտելեն, երգիծական վէպ, 250 էջ:

Ու վէպս նոր աւարտած՝ պատուհանիս առջեւ արժանաւոր խոնջէնք մը կը վայելէի, երբ տեսայ Նշան-Պապիկեան գրատունին տէրերէն մէկը, որ կնիկներու փէշերը դիտելով՝ կը յառաջանար տատիս-մէնմէն:

— Աղէկ միտքս ինկա՛ւ, բացազանչեցի՝ եթէ վէպս սըւոնց ծախէի ...

Գիտէի որ Նշան-Պապիկեան գրատունին յարգելի տէրերը շատ նշանաւոր չեն իրենց ... առատաձեռնութեամբ, բայց ձեռքիս տակը զանո՛նք միայն ունէի:

— Է՛յ, պարո՛ն, միւսի՛ւ, տէ՛ր ... պօռացի պատուհանն վար:

ՆԱՄԱԿԻՆ ՄԷՋ ՆԱՄԱԿ ՄԵՐ

Սիրելի խաչիկս,

Պատմեցի քեզ թէ անցեալ տարի Վարդապետին երկուշաբթի գիշեր ժամը երկուքին ատենները ինչ ազւոր ժամանակ անցուցի ... հիմա հետ:

Հայրը տակաւին չէր գիտեր թէ խենդի պէս գիրար կը սիրէինք: Վերջապէս իմացեր է եղեր: Անկէ ի վեր 6 ամիս եղաւ՝ քեզի չեմ տեսած: Ինչե՛ր անցան գլխէս, գիտե՛ս...

Ա՛խ հիմայ ա՛ն սիրտը ուրիշի մըն է տուեր: Ո՛ւր մնացին այն տաք համբոյրները՝ որոնցմով կողողէինք գիրար: Զեռքի այն սեղմումները՝ որոնք հեշտանքի տաք սարսուռ մը կը ներարկէին մեր երակներուն մէջ: Ինչ... միթէ կրնան սուտ ըլլալ Աստուած իմ, այն խոստումները՝ զորս ըրած է ինձ ամէն ուր որ իրարու հանդիպած ենք, փողոցին անկիւնը, ճամբան, թատրոնին պարտէզը, լեռը ...:

Խենդենայս բան մը չ'է, Խաչիկ, երբոր միտքս կ'իյնայ այս ամէ՛նը, մանաւանդ ... մանաւանդ այն պահը՝ որ օրերով փայփայեր և օրօրեր էր իմ տարփաւառ երեւակայութիւնս ...: Աս ի՛նչ կրակ է որ կ'այրէ ներսըս:

Այդ տպաւորութեան տակ գրի առած եմ սա հետեւեալ ոտանաւորս՝ զոր քեզ կը զրկեմ:

Ատոր մէջ զրեւ եմ ամբողջ իմ խանդոտ պաշտումս ու հոգիս:

Պարսամեան և Մեծարենց մարս պիտի ըլլան քովս: Վստահ եմ որ Վահրամ Թաթուզիս պիտի փառաբանէ և Ննովք Արմէն ձեռքըս պիտի սեղմէ:

Կը յուսամ թէ դուն աղէկ ես, քու գուարթութենէդ մաս մը զրկէ ինձի եթէ նմանօրինակ տխուր դրուագ մը չ'է ամպոտած երջանկութեանդ հորիզոնը:

Բարեկամդ
ԿԱՐՊԵՍ

ՄԱՐՄԱՐԷ ԿՈՒՐԾՔԸ

Վա՛րդ եր քե մեխակ.
Ձոյգ մը ծաղիկներ՝
Յամառ ու դեռ խակ
Գրլուխնին սնկեր՝

Իր եթերային
Կոյս լանջին վրայ,
Կը բոքոյին
Անգուսպ անուղղայ:

Հարցուցի իրեն՝
Թե ինչպէս ասոնք
Հոս սեղ բուսեր են
Գիրք և՛ այնքան ասոնք:

Պիրկ խենդեցունող
Այդ կոկոններուն
Ո՛ր սեղ եւ ո՛ր հող
Տուին կեանք եւ բուն:

Ցուցուց ինձ ներմակ
Կուրծք մը մարմարէ.
Նւ սիրս մը համակ
Նրկաքէ ֆարէ ...:

Արդ ո՛վ է ըսեր
Թե ֆարէն չե մարք
Հասցունել բոյսեր՝
Մանրեակ կամ վարդ ...:

* * *

Պատասխանը

Սիրելի Կարպիս,

Նամակդ առի. ոտանաւորդ ալ մէկտեղ, բաներ մըն էիր ըսեր. «հեշտանքի տաք սարսուռը» ո՛րը կըլլայ կոր, ան չի հասկըցայ: Ո՛ւր մնացին կըսես, այն տաք համբոյրները ...: Թօհաֆ ես, կայնէր ինձի կը հարցունես, բերնիդ չի հարցունես մէյ մը: Հէ՛մ ինչո՞ւ խենդենաս գողցած պաշիկներդ միտք բերելով. Դուն գողցեր ես, ան գողցեր է, երկուքնիդ ֆիթ էք եղեր:

Ինչպէս ըլլալս կը հարցունես, փառք Աստուծոյ աղէկ եմ հէ՛մ շատ աղէկ եմ, և գէշ ալ ըլլալիք չ'ունիմ: Հա՛ չի մոռնամ ըսել որ Պարսամեան և քանի մը հոգիի անուններն ալ տուեր էիր. ատոնք ո՛վ կըլլան կոր: Անցած տարի կազինոն նստած ատեննիս մեր քովի մասան քանի մը հոգի նստեր էին, հետեւին խօսեցար, եաքը անոնք գիրար տըփեցին բաներ մը ըրին, անոնք չըլլան: Ինչ որ է, կերեւայ թէ խաճախներդ ըլլալու են:

Ոտանաւորդ շատ թօհաֆ էր. քար, հող, ծաղիկ, կոկոն ... մէկ բուսան լախանան պակաս էր: Կնկա՛ն վրայ գրեր էիր թէ սա մեր Գիրքոր աղային էգին գիրի էիր առեր: Ան ի՛նչ խենդութիւն է մէջը խօֆ բաներու

համար սիրտ փոր հատցունել. լանսիրտ եղիր պըտորճիկ մը: Կը նայիմ կոր որ քիթէդ անդին չ'ես տեսնար կոր: Քարին վրայ ինչպէս կը բուսնին եղեր այդ ծաղիկները... Ինչո՞ւ պէտք: Մաղիկ գտա՞ր... հոտուըտալդ նայէ, որ անցնի նէ կը թռումի:

Տաք համբոյրները խելքդ կը թոցունեն կոր եղեր հա... Ատանք բաներու խելքս չի պառկիր իմին. ես սա գիտեմ որ երեկուան կերած տաք կերակուրիս երեսը այսօր չեմ նայիր, ինչու որ կը պաղի... և եթէ տաք տեղ ալ պահելու ըլլամ... կ'աշխի կամ կը տոժկի:

Ես ասանկ եմ, սիրելի՛ս, և քուկին վրադ առաւելութիւն մըն ալ ունիմ որ քիչով գոհ կըլլամ, չքաւորութեան, զրկանքի կը դիմանամ: Դուն սիրուհիիդ սիրտը քարի կը նմանցունես՝ ապրանքին վարնոցութիւնը ցոյց տալու համար, մինչդեռ ե՛ս քարը հացի տեղ կուտեմ... Թէ որ էվելօք անօթի ըլլամ, և եթէ փողոցն ալ մնամ, քարը գլխիս բարձ կընեմ կը պառկիմ, մանաւանդ այդ կարգի քարեր՝ որոնք խուօ քիւլիւ բարձերուն քար կը հանեն: Համմէ՛:

Ուրիշ անգամ չըլլայ որ իմ մասիս խենդ բաներ անցունես միտքէդ, իմ զուարթութիւնս բնաւ չի խանգարիր: Հոգդ մի ըններ: Եւ ինչո՞ւ զուարթ չըլլամ:

Ողջ ըլլան մանիք եւ քիթիլամ.
Խե՛նդ եմ որ սխիւմ ու նստիմ լամ.
Բամպակ է այն մաւղը՝ որ կուլայ,
Ու չերգեր ինձի պէս քալալալ:

Դուն ալ ինձի պէս ըրէ, երգէ՛, երգէ՛,
Թրալալա, թրալալա, եթէ բաւսէն երգ չես գիտեր կարճադարէն թող ըլլայ:

Ես մէկ սկզբունք ունիմ տղա՛ս, ըսեմ, ախանջ տուր:

Անունս է Խաչիկ
Ուզածըս պաչիկ
Նսֆէն ալ պանիկ:

Է... ա՛ն տիւղին հետ ալ եթէ գտնեմ քիչ մը խալեար կամ ճաճիկ, պիտի տեսնես թէ որքան երջանիկ է քու ընկերդ՝

ԽԱՉԻԿ

Մէկ երկու շաբաթ առաջ թանձր մառախուղ մը արգելք եղաւ իրիկուան շոգենաւերու երթեւեկութեան:

Բարկենդանկին երկու շաբաթի գիշերն էր անհերա տեղ չէր մնացած՝ լեցուած էին Իւսկիւտարի Եէնի-մահալէցիէն բռնէ մինչեւ Վոսփորի Եէնի-մահալէցին:

Ճաշարանը քովի մասաս երիտասարդ մը նստած կը ճաշէր, քիթին տակէն բաներ մը մոլտալով, որ աւելի երգի կը նմանէր: Երեսը նայեցայ, «ճանչուր դէմք» մը կերեւար... ճանչուր դէմք մը անշուշտ ոչ-գրական հըրապարակի վրայ:

Կէս ժամ ետքը նայեցայ որ սուսիկ բուսիկ կծիկը դրեր է: Գիտիմք պատուած պահաւան մը գտայ: Վրան գրուած էր. «Մեծայարգ բարեկամս Տիար Խաչիկ Ե... Եան (Իւսկիւտար): Մէջը գտայ այդ երկու նամակները, առաջինը մաքուր գրուած, իսկ երկրորդը գրուած, աւրուած, վրայէն տարբեր գիրերով նորէն գրուած, ուրկէ հետեւցուցի թէ ուրիշի մը սրբագրել տալով մաքուրը քաշելէ ետքը այդ brouillonը քովը պահած ըլլալու էր:


Այդ երկու պարոնները՝ զորս ճանչնալու բաղդը չեմ ունեցած, ներողամիտ պիտի գտնուին անշուշտ երբ հրատարակուած տեսնեն իրենց նամակները՝ որոնք ցոյց կուտան երկու սրտակից բարեկամներու այսքան տարբեր ու իրարու հակասեալ հայեցակէտները կեանքի և սիրոյ մասին:

Մին գաղափարականին ձգտող տիւր կեանք մը կապրի, իսկ միւսը իրականին հետամուտ, օրը՝ օր կընէ: Եւ տհա բուն իսկ այս հանգամանքներով է որ հետաքրքրական կը դառնան այդ երկու նամակները՝ որոնց հրատարակումը կը յուսամ թէ անխորհուրդ անվերապահութեան թագնասքող խաղի մը չը պիտի վերագրուի, Ենովք Արմէնի տճովը խօսելով:

ՇԱԲԱՐԵՂԵԳ



ՄԵՆՔ ԻՆՉՈՒ ՄԱՐԴ ՉԵՆՔ ԸԼԼԱՐ



Ազդու վերնագիրներ կան որոնց տակը չատ անգամ ամենէն անհամ գրութիւններու կը հանդիպինք, ճիշտ տեսքոտ ու պատկառելի երեւոյթ ունեցող կարգ մը մարդոց պէս որոնց գլուխը աշխարհիս ամենէն պարապ ու ապուշ գաղափարներով միայն վարդարուած կ'ըլլայ:

Անիրաւութիւն մը գործած չ'ըլլալու համար անմիջապէս ըսեմ թէ վերնագիրս փոխ առած եմ մի ոմն Սկիւտարցի յօդուածագիր պարոնէ որ անցեալները հիմակուան երիտասարդներուն ձօնած էր այդ կարգի յօդուած մը:

Կարդացի, անգամ մ'ալ վրայէն անցայ, կերակուրէն յետոյ մէյ մ'ալ աչքէ անցուցի, բայց դժբաղդաբար բան մ'ալ չի կրցի հասկընալ:

Կերեւի թէ Պարոնը ուզած է բան մը հասկցնել թերեւս բաթոճներուն, սակայն ինչպէս սովոր են ըսել, վրայ մարդ է հասեր:

Յօդուած մը զոր կարդացած ատենս դիմաց կայնած կարծեցի քարոզիչ մը:

Ահա տպաւորութիւնը՝ զոր ըրած է վրաս: Կը պատմեն թէ ժամանակին հարսնիքի մը մէջ Տէրպապարին մեքեն օղի ուզեր է, և ուրովհետեւ հին ատենուան Տէրպապաները հիմակուաններուն պէս համարձակ չ'էին, ուստի՝ «ժամկոչ աղբօրը օղի մը չի տաք» ըսեր է:

Ճիշտ անանկ ալ ըրած է երիտասարդ յօդուածագիրը:

Ինք մարդ չ'է եղած կամ չպիտի ըլլայ եղեր, աղէկ, ատոր բան մը ըսած չ'ունինք, բայց ինչ տեղը կայ բոլոր երիտասարդներն ալ մէկ ջուրով լուալ:

Մարդ ինքզինքին համար շատ բան կըրնայ ըսել, սակայն ո՞վ տուած է իրաւունքը բոլորը մէկ իրար խառնելու:

Երեք անուի ոճիրներ գտած է հիմակուան երիտասարդներուն քովը, այսինքն՝ Կի՛ն, ԽԱՂ, Գի՛նի:

Երրորդութիւն մը՝ որ միայն կարող է մարդս՝ կատարեալ մարդ ընել, անշուշտ իր չափովը:

Միամիտ մայրեր կան՝ որոնք իրենց զաւակաց վրայ խօսած ատեննին գովելու դիտումով մը կաւեցնեն «ըհ, իմ տղաս նէ ըռախի կը խմէ նէ թիւթիւն, հէլէ կաղինօ մը պիլէ տահա գացած չ'ունի»:

Ասոր տեղը տղաս ապուշին մէկն է եթէ ըսեր՝ աւելի լաւ ըրած չ'է՛ր ըլլար:

Ոչ կինը և ոչ ալ գինին մարդս կը կործանեն, խնդիրը գործածել գիտնալուն վրայ է:

Թոյնը որ վնասակար է՝ իր լաւ արդիւնքը կ'ունենայ, եթէ պէտք եղածին չափ առնուի, ուր մնաց ... Կի՛նԸ:

Առանց վախնալու այդ ըսածներուդ համար մէյմէկ քիչ նայէ, պզտիկ բարեկամս, եթէ կուզես մարդ ըլլալ՝ մտիկ ըրէ ինձ, որ քեզի չափ խստապահանջ չ'եմ:

Ուրեմն՝

1. — Օրը երկու անգամ կ'օշիկներդ ներկել մի տար:

2. — Շիք երեւնալու համար Յունուարին բառտըսիւով մի պտըտիր:

3. — Քալած ատենդ ինքզինքդ շատ մի դիտեր:

4. — Բանթալօնդ չաքաթը անգամ մը միայն իւթիւ ընել տաս նէ կը բաւէ:

5. — Փերեզակին խանութը գիշերուան մինչեւ երկուքը մի նստիր, տունը կերակուրի կ'սպասեն:

6. — Գոնէ երեք ամիսը մէկ անգամ մազերդ կտրել տուր:

Կզւզե՞ս, չարունակե՞մ տակաւին, բայց կարծեմ այս չափը բաւական է:

Ըսածներս կէտ առ կէտ գործադրէ և պիտի տեսնես որ առանց զգալու մարդ եղեր ես:

Եթէ երբէք ասոնք ալ օգուտ մը չ'ունենան, այն ատեն յանցանքը իմինս չ'է եւս...

ԷՆԺԷԱ

ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ԱՂԶԻԿՏԵՍԸ

Գեղեցիկ եմ գեղեցիկ,
Քիչ շատ ալ բարեկեցիկ,
Թեեւ ըլլամ ալ քացիկ,
Տղայ մըն եմ ընթացիկ:

Ըսելով՝ միջահասակ երիտասարդը ձեռքերը բանթալոնին գրպանը դրած քառակուսի սենեկին երկայնքը, լայնքը կը չափէփեր:

Բանաստեղծ ու վիպագիր,
Մտեր շաղուեմ ոչ թէ կիր,
Մուսաներու որդեգիր
Աղջիկներու համակիր:

— Աղէ՛կ ... , ասոնք աղէկ, բայց ինչո՞ւ չեմ ամուսնանար ... ինչո՞ւ պարզ գրաչարներն անգամ հարիւրներով ոսկիներու հետ՝ աղուոր կին մ'ալ թեւերնին զարկած պտըտին, ու ես, որ իրենց հացի փաթա հոգալու համար մազերս փետտելով՝ տաղեր ու տողեր կարտադրեմ, չի կրնամ պիտի գտնել իտէալը ... ահ իտէալս ...

Ոն իսկալս է վսեմ,
Չմնաղ հուրի ոչ նսեմ
Ան քոր բաղդիս ի՞նչ քսեմ
Սեւ է պատեր սրսիս սեմ:

— Հրամայեցէք նայինք, իշտէ, ոտանաւոր, նա', հիւսիսիւ մէյսան, իմ ընկերներս արձակի մէջ չը կ'մկման, մինչ ես՝ առանց գրել չարժեւու յանգաւոր կը քնոթեմ ... սենեկիս չորս պատերը ... Ափսո՞ս ... արժանիք գնահատել չեն գիտեր աւանակները, (պեխերը կոլորէ երկու ձեռքով եւ լուսքոն պօքերուն վրայ կը նայի, որոնց փոքեր լասիկէն նաքուսած են), Դրամ ալ ունիմ, նա', երկու մէծիտիէ, երեք քառորդ, տասնոց, քառասունոց, կէս ալ անգղիական, ու ըսել թէ՛ ...

Օրուան զաւթ չունին կուս
Եւ ոչ ալ սրտեմին գութ:
Աղջիկ տեւք քուտե քուտե,
Ոչ թէ քեւք ծաղրանում
Հարուս է աս՝ չէ փոկդ:

— Օ՛ֆ ... կայրիմ կոր, ճաթիմ պիտի, (ժիսակ գրասեղանին մօտը կը վազէ, կը նստի, հոս հոն նետած թուղթի կտորները ձեռքէ, աչքէ կանցցնէ):

— Նա', Ա. Մամուլին գրած նամակիս պատասխանը նայէ եկա՞ւ ... , ութը յօդուած զրկէ, մէջէն հեթեմ պօլուս պիտի զատեն եղբ'ր տէ՛ ... հատ մը պիտի թխեն եղեր ... նա՛ ... վայ պաշրերզա՛ ... ես որ անուն հանած եմ իրրեւ բանաստեղծ, ոտանաւորիս թէ և նորավիպագիր ... Զէ՛ք հաւատար, նա՛ օրիորդներն ալ գիտեն, կարդացած են իմ գրուած քներս, ուր որ սուսն է մը ըլլայ ես հոն կըլլամ, և պարելէ յոգնած երբ սանկ ուճ պուճախ պտըտիմ ու կենամ զլանիկ մը ծխելու համար, տասը քսան հատը գլուխս կը ժողվուին, որպէս զի անսխալ ոտանաւորներս կարդամ իրենց ու ըսել թէ ...

Բանաստեղծին՝ աղջիկ չկայ ասանոր:
Կօկակարին սիրով կուսան, իսկ անոր
Որ քաղ քերքէ, վիպեր գրէ նորանոր
Բիացային վրայ նետուած մը կա՞յ որ ... :

(Նոյն միջոցին մայրը՝ ներս կը մտնէ ձեռքը լինեցով սաք ջուր):

— Նա ետվրուս, ոտքերս ցուրաղ խածերէ ըսիր, քեզի չալղամի ջուր քերի քի մէջը զնես ...

— Ո՛ւֆ մայր, դուն ալ ի՞նչեր կը հնարես ... ես իմ ցաւս կուլամ ...

— Իշտէ տղաս, պանծոն ըրէ քի ցաւդ ցեցդ առնէ, գիտեմ ի՛նչ ետմուռնախ ցաւ է նէ ... հէլէ դուն սա տոտիսներդ մէջը դիր ...

— Մա՛յր, աս ասանկ չըլլար, ես մինչեւ ե՛րբ ամուրի պիտի մնամ ... ես կարգուիմ պիտի ալ, որոշեցի, որոշեցի չէ՛՝ վճռեցի ամուսնանալ ...

— Տղաս, ես ալ կուզեմ կոր ամա՛, մէկ երկու տեղ գլուխս զարկի ույթիչ չեղաւ, քիչ մը տահա ջուրդ քաշէ, կնիկ մը նայելու

սրան անցիր տէ, ինէ գիտցիր բուանդիի կը-
տոր մը ...

— Ի՞նչ ... իմ ոտանաւորներս չեն կար-
գացեր, իմ վէպերս, իմ նորավէպերս չեն
գիտեր կոր ... չեն գիտեր կոր որ ես գա-
ւաթ մը ջուր խմելու պէս յօգուած կը գրեմ
և մէկ գրածս ...

— Իշտէ հա՛, աղէկ ըսիր, խօսքը մէ-
ջերնիս, կըսեն կոր քի, հիմա ատանկ վար-
ժապետ խաֆալըի աղջիկ տուող չիգայ տէյի...

— Վարժապետ խաֆալը՞ ... (կելլայ կը
կայցի եւ անանկ ուսում մը կընէ որ, գե-
ֆինը դրուած շաղկապին ջուրը սենեակը կո-
ղողէ)։

— Քա ետլրում, գէշկէմ չըսէի ... սա
նայէ ի՞նչ եղաւ օտան ... իրաւ քի ջուր
վաթելը ուղղու է, ուղղու է ամա՛, գիտես
քի ընող ըլլող չունինք իշտէ ...

— Հիմա ինծի նայէ ուստու քեզի ըսեմ,
ես որ այսօր ճանչցուած, սիրուած կամ ոչ
ինչդիր չէ՛ բանաստեղծ մըն եմ, հա՛, այս
օրուընէ որոշած եմ ամուսնանալ և ձեռքը
ինչդրել այն աղջկան՝ որ կարենայ քիչ շատ
ոտանաւոր մը գրել սա շարած յանգերովս...

— Ձի հասկցայ որդտի, ի՞նչ կըսես կոր,
կարգուիդ աղէկ ամա, տիլէկդ ի՞նչ է ...

— Այսինքն թէ նոյնայանգ բառեր պիտի
տամ՝ լեցնեն պիտի ...

— Հասկցայ ... տալերը դուն պիտի
տաս զէմինը անոնք պիտի լեցունեն քանա-
վային ... հա՛ ... ստնկ ըսէ ...

— Ո՛ւժք ... այսչափ ժամանակուան մէջ
յօդուած մը կրնայի գրել տուտու, ինչո՞ւ
չես հասկնամ ... պոչերը ես պիտի տամ
իրենք լեցունեն պիտի հա՛, սանկ ըսեմ ...

— Խըռս մեղար ամա, կէնէ չի հասկցայ...

— Սատկիմ պիտի տուտու ...

— Վրադ ուղղու բաց ետլրուս, ինչո՞ւ
սատկիս, քեզի աղջիկ պակաս ըլլայ, ես հի-
մա բէշէրս կը ժողվեմ օտախ կի՛րամ ...

— Բայց կուզեմ որ սա յանգերու լիւթան
հետդ առնես և ըսես որ, որ աղջիկը որ կա-
րենայ այս յանգերով ստանաւոր մը չինել,
ան պիտի առնեմ ...

— Աղէ՛կ ամա ետլրուս, հարուրէն հա-
զարէն մէկ հատ մը քեզի պէս ո՛ւր պիտի
գտնաս ...

— Ձիտեմ ալ, որ աղջիկը ըլլայ ըլլայ,
պէտք է որ սա տուած ռիմերովս ոտանաւոր
մը հիւսէ ...

— Էհ պէլքի հուսող մը կըլլայ, պոյ պոյ
մաղերնին ամէն օր կը հիւսէն կոր, ֆարադա
քեզի պէս հաթիմ պիթիմ գրող կարգացող
մը պիտի առնեն նէ թող ճահտ ընեն սա
թուղթին վրայ ալ հուսեն, ըսելով Տիկին
մայրը յանգերու լիւթան կառնէ և գրպանը
կը դնէ, մինչ բանաստեղծ միւսին ակնոցը
դնելով մէկ կողմէն ոտքերը չալղամին ջու-
րը կը դնէ և մատներովն ալ կսկսի համբել
կիսաւարտ ոտանաւորի մը ... ոտքերը։

* * *

Հետեւեալ առաւօտուն Տիկին մայրը «ես
գրող կարգացողի մար եմ» ի պիլիմ սիքա-
ճեմ գալուածքով մը շիտակ դուռը ափ կառ-
նէ այն տունին՝ ուր տեղի աղջիկանը վրայօք
լսած էր թէ քիչ շատ ուսեալ է։

— Բարի լուս ձեզ, ափ կընէք առտուանց
կանուխ մարդու տուն ափ չեն առնէ՞ր ամա,
խայրըրը գործի մը համար ըլլալուն ճէսարէթ
առի ...

— Հրամանցէք կըսէ տան տիկինը և հիւ-
րը վեր՝ սալօնը կառաջնորդէ, և մէկ ակ-
նարկով կը հասկնան թէ՛ ամուսնութեան սա-
կարկուծիւն մը կայ գործին մէջ։

Սովորական սալլաւ պառ ինչպէս էք նե-
րու ծթած արարողութենէն վերջ՝ մեր միւ-
սիւ բանաստեղծին հաւի գլուխ մայրիկը
խօսք կառնէ։

— Պէլքի շաշմիշ եղաք քի, աճապ ի՞նչ
միտք բանի վիզիթայ է սա տէյի, անանկ
չէ՞ ...

— Ինչո՞ւ, շատ շնորհակալ ենք, մարդս
մարդով է, դուռերնիս ամէն ատեն բաց է...
կըսէ տան տիրուհին, սպասելով որ խօսք
բանայ։

— Աստուծոյ հրամանովը, օրերդը տը-
ղուս առնելու կը փափաքինք կոր ...

— Եթէ յարմարի ինչո՞ւ չէ, ամենայն սի-
րով ... կը պատասխանէ տան տէրը, և այս
միջոցին խօսքի նիւթ օրերդը՝ ինչպէս սո-
վորութիւն է, կամաց մը դուրս կելլայ սեն-
եակէն, մինակ ձգելով երկու մայրերը սա-
կարկութեան մէջ։

— Շիտակը Դուդէք նէ, ծովը խում,

տղուս համար աղջիկ խաղաղամիշ ընողները տահա շատ են պէլքի, ըսի ես, աղէկ զաւակ ունենալն ալ բէք պէօհիւղիւր բան է եղէր, չաթ դուռը, չութ դուռը, պիր տիւզ խապար ...

— Այո՛, անանկ կըլլայ, բայց պէտք է գիտնաք որ՝ աղէկ աղջիկ ունեցողինն ալ անանկ է ... կըսէ աղջկանը մայրը, մատ մը կեռտան կախելով, ինքն ալ իր կարգին խրդ ըրած ըլլալու համար:

— Նէ իսէ, ես մայրն եմ ամա, դուք կէնէ կրնաք հարցունել տղուս վրայօք, քառնապաթ խըվըոճըս մը քի, անխտար կրնայ ըլլալ ...

— Աֆ կընես ամա, խասապ է ...

— Չէ՛ ... վրան բարի, գիր կըսէ կը խենդենայ ...

— Մարդու քով գրագիր է անանկ է նէ, մեղի շատ ատ պիչիմները ուղղներ ելան ամա չի տուի, չիւնքիւ, աս օր ամսակոնը, վաղն ալ բապուճները ծառքը կուտան ... ետքէն ...

— Քա չէ՛ ... անանկ քու գիտցած ես զըճիներէդ չէ՛ ... հասկցա՛յ քու ըսածդ, ասիկայ ինքիր կլխուն կը գրէ ...

— Հա, առանձին վաճառական ըլլալու է, էյ աղէկ ...

— Ատանկ վաճառական, խանութպան չէ ճանըմ, նասըլ ըսեմ, նասըլ հասկցունեմ ... սանկ չըրն իշի բան մը կելլայ կը գրէ, աշխարհք կը կարդայ մէթը կուտայ կոր, վրան գալիք մը չիգայ բիացան ...

— Հասկցա՛յ ... խմբագիր, լրագրող ...

— Հա ամա անկէ վե՛ր ...

— Գրագէտ չէնէ ...

— Հա՛, անկէ վե՛ր ...

— Հեղինա՛կ ...

— Հա՛ ամա, անկէ տահա վեր ...

— Ինչ գիտնամ, իմաստասէր կըսեն, փիլիսոփայ կըսեն ... չա՛տ ...

— Տահա, տահա հաթիմ պիթիմ սօյը ատ շարածներո՛ւդ ...

— Բանաստեղծ արդեօք ...

— Հա՛, հորդ խողը պօլ ըլլայ, իշտէ ատ սօյը գրող կարդացող մըն է քի, սանկ մէյ մը հինգ մատները, արեւը սիրեմ, մագերուն մէջը խօթելու ըլլայ տէ գլոխը ետուշ պէ-

կիրի պէս մէկ քով ծռելու օր ըլլա՛յ նէ, թապաղաներով թուղթ խառալա՛ւիշ կընէ լաֆ չէ ...

— Էյ Աստուած պահէ ամա՛, գիտնալս բէք պիւրիւմիւ մախպուլ գործ մը չէ ատիկայ, ինչ կը վաստակի վեր ի վերոյ ...

— Գետինին տիպը ասին խաղէթաճինե-րը, շան պէս կաշխատցունեն կոր զաւակս, անկէ ալ խուռու խուռունա մէթիէ մը քի, գալ շաթու թթուած ունի տէյի քի՛, հաւատքիս պէս գիտեմ, ետվրուս մէջը ըլլալուն կիպի, օսկի կը նետեն կոր ներս օսկի, մէկ առնողը մէկ հատ մըն ալ կառնէ կոր ատ զաղէթայէն ...

— Էյ շատ լաւ, ինչպէս պիտի կրնայ ընտանիք կազմել, պահել, աս կէտը քիչ մը նկատի առնելու ենք ... կըսէ տան տիրուհին՝ յոնքերը վեր վեր նետելով:

— Տուներնիս մերն է, քերա չունինք, խաղէթայէն դուքս ետղըճութին ալ ունի ետվրուս, հէմ կըսէ կոր քի էկէր առած աղջիկս ալ իմին կէսիս խըտար գրող կարդացող ըլլայ նէ, ծարերը նախարարը պաներ մը կայ նէ ինչ կըսեն իշտէ ...

— Հա՛, հասկցայ ոտանաւոր ...

— Իշտէ ատիկայ կը գրենք կը ծախենք, օսկի կը քաշենք կըսէ կոր ... չիյտեմ աղջիկդ ո՛ր խվամ նէ ...

— Նառդուհիս ալ իրաւ քի դպրոցէն ելած է ամա՛, ես աւելի տան հոգածութիւններուն, խոհանոցի, սպասարկութեան, կերակուրի և կարի ոյժ տուած եմ, և բոլոր ջանքս եղած է իր կրթութիւնը և դաշնաւ կը ...

— Ա՛ ... չեղաւ, տղաս հիչ ատոնք չի փնտէր կոր, մինակ խույրուխու գիր գիտնայ կըսէ կոր, ինչ ըսիր անո՞ր ..., ոտնու-ա՛յ ըսիր, ոտնամա՛ն է ...

— Ոտանաւոր, բայց չեմ կարծեր որ մե-րինը կրնայ ընել ...

— Իշտէ նայէ տղաս թուղթ մը տուաւ ըսա՛ւ քի, աս ոտանաւորը չինելու ըլլա՛յ նէ, խալխան անցուր տէյի ... ըսելով բէշը վեր կառնէ և միւսիւին տուած յանգերուն թուղթը մէջտեղ դնելով, այն միջոցին ուր Օր. Նառդուհի, ըստ սովորականին անուշը կը հրամցնէր:

— Իշտէ աղջիկս, ի՞նչ ընենք, հիմակուան տղաքներուն պէս չէ իմինս, Աստուած չար աշկէ պահէ, մէկ հատիկ մըն է վարժապետներուն մէջը, նայէ սա թուղթը կարդայ, էկէր կլոխ կրնաս հանէր նէ, կոլոշկայի պէս քեզ խօլթուխիս տակը պիտի առնեմ, ինծի զաւակ պիտի ընեմ քեզի ...

Օր. Նառդուհի, ասկէ յիսուն տարի առաջուան աղջիկներու յատուկ ամօթի կարմիրը դիմակ ըրաւ կարծես, և գլուխը ծռելով՝ պիշ պիշ սկսաւ մօրկանը նայիլ, անկէ սպասելով հրամանը՝ հրամանին համար:

— Սուս աղջիկս, առ նայինք, պէլքի կը պէճերուիս, ոտանաւորի բառեր են եղէր, Տիկինին զաւակը բանաստեղծ ըլլալուն, կուղէ կոր որ առնելիք աղջիկն ալ գիտնական ըլլայ, նայէ, փորձէ անգամ մը, կարելի է յաջողիս ...

Օր. Նառդուհի, թուղթը առնելով վրան կը նայի և քմծիծաղով մը մօրը քովը երթալով,

— Տուտու, ծարերը մէկ պիչիմ բառեր գրեր է, ասդինները ես պիտի լեցունեմ ... Իմ գործս չէ, նասըլ ընենք տէ պէլլիսիդ մը ույտուրմիշ ընէինք ... կըսէ ցած ձայնով ականջին:

— Հիմա դուն թուղթը առ տէ, իրիկուան հարըգ գայ նէ անոր ալ կը ցուցնենք, նայինք ի՞նչ կըսէ ... ըսելով՝ տիկնոջը կը դառնայ,

— Շատ լաւ, տիկին, ձգեցէք, աղջիկս թող նայի, աշխատի, վաղը պատասխանը կը ղրկենք ...

— Աղէկ ըսիր ամա, ես ելլայ պաշխասիին գրել տայ նէ ... ետ ... աս մէսէլէն ալ կայ, տղաս ֆառղին երթայ նէ չեմ խառնուիր ...

— Մենք անանկ կեղծ ու պատիր բաներ չենք գիտեր, կըցածին չափ թող աշխատի, ինչ որ գրելու ըլլայ նէ միւսին թող նայի անգամ մը, գործին գալու ըլլայ նէ՝ խըսմէթէ կըսենք կըլլայ կերթայ ...

— Էյ բէք աղէկ, մնաք բարով, ամա լիսթան խայիպ չընէք, չիւնքիւ տահա տուն տուն պիտի պտըտցունեմ ... ըսելով ոտքի կեցայ և մնաս բարով ըսելով կը մեկնի տու-

նեն, իր բանաստեղծ դաւկին գովասանքներովը առցուն:

Ձի մոռնանք ըսելու որ բանաստեղծ միւսիւն տուած յանգերն էին՝

Յուլ, փուլ, անուլ, ուլ, մուլ, ապուլ, սուլ, Սիւանուլ, քուլ, կուլ, խուլ, ցուլ:

* * *

Երեկոյին Սարգիս աղա շուկայէն դարձին երբ տունէն ներս կը մտնէ, իր հոգեհատորը՝ Նառդուհին չի տեսնելուն սրտնեղած կը հարցնէ տիկնոջը,

— Ի՞նչ է ան, կէնէ Նառդիկը չեմ տեսնար կոր ...

— Սուս եղիր, չիյտես գլոխինս ի՞նչ եկաւ ...

— Էյ չափուիս ըսէ, սիրտս կը հատնի կոր, ֆէսֆէսէ կընեմ կոր ... ի՞նչ եղաւ ...

— Հիչ, դողի բան չէ, աս օր կընիկ մը եկաւ մեր Նառդիկը տեսնալու, կեանքիս մէջը ասանկ աղջիկտես, ասանկ սակարկութիւն չէի տեսեր ... քնաւ դրամի կամ ֆեհեհի խօսք չիգայ, միտակ գրպանէն լիսթաւ մը հանեց, տղան կարգ մը բառեր գրեր է, եթէ աղջիկը աս բառերով աղուոր ոտանաւոր մը չի նկու ըլլայ նէ, պիտի առնէ եղէր ...

— Տէր ողորմեայ ... աս զիւպպէն հոս մեր գեղէն է ...

— Հապա՛, պէլքի տեսած ես, լրագիրներուն մէջը յօդուած ալ կուտայ եղէր ...

— Չըսե՛ս քի վարժապետ խաֆալըին աղջիկ չենք ի տար տէյի, զէվզէ՛կ հէրիֆ ...

— Հիմա մեր Նառդիկն ալ որ սահաթ է վերը ցուրտ տեղը նստեր կաշխատի կոր քի իլլէ ույտուրմիշ ընէ տէյի ...

— Ինծի նայէ, գնայ տա լիսթան հոս բեր, ըռախիս թէփսին ալ բեր, անոր տեղը ես ոտանաւոր մը չի նեմ խրկեմ տէ, պարէ ճէտտինէ թէօպէ, մէյ մըն ալ խալէմը ծառք չառնէ:

— Աման Սարգիս աղա, չելլաս ըռեղիլ բաներ գրես, եախօտ չի կրնաս տէ վրանիս խնդացնենք ...

— Դուն բեր ինչո՞ւղ պէտք, ոտանաւոր չէ՞ ուղածը, դուն ինէ գիտցիր ...:

Տիկինը անմիջապէս վեր կը վազէ, լիսթան կառնէ և ինչպէս ապսպրած էր ամու-

սինը, օղիին ափսէն ալ չտկելով քովը կը դնէ ու ինք կը հեռանայ, տան գործերով զբաղելու:

Սարգիս աղա անգամ մը յանգերուն վրայ աչք պտըտցնելէ վերջ, որովհետեւ չարքի բիազի կերած մէկն էր, չուկայի բանաձեւերով համեմուած հետեւեալ սողորը կը սկսի գրել.

Անունըդ չիյսեմ, կէքիւմեմ ի յուս
Ըսրդան օրի ես չենէ վարդի փուս
Կեօզիւկիդ տակի աչքերդ նուս նուս,
Շէս պէս տարեր եմ նայումսդ անուս:
Զիհնրդ պատեր է խաքքնա մեուս,
Կարգուելու ալ մնացեր էս ուս
Իրար եմ եկեր բերանդ ու քուս:
Առնելէ առաջ Նառքիկ, Սիրանուս
Թուլունայային տակ առ պաղկէկ մի տուս:
Յօդուած գրելուդ ա՛ն սկսիք խուս
Գլխիդ ծեծէ ի մէջ սխտորիուս
Առի՛ր մի բայքդ ա՛ր զիւպայէ ապուս:

Այս առիկօ ոտանաւորը հետեւեալ օրը զրկուեցաւ բանաստեղծ միւսիւին, և չենք գիտեր թէ՛ ի՛նչ ազդեցութիւն ըրաւ այս գիրը, սա չափը ըսենք որ՝ յիշեալ միւսիւն երկու ժամ վերջ նամակ մը դրաւ պահարանս սա վերնագիրով՝

ԱՆՏԱՇ ՀՈՐԻՋՈՆ

Եւ նամակին վրայ ալ իզմիր գրելով՝ նամակատուն ձգեց ու ինք գնաց Մօտայի լեզուակին ծայրը ծառի մը բունին վրայ նստելով՝ Մարմարայի ալիքները համբելու:

ԼԻԼԱ

ՄԱՔՐԱՍԷՐՆԵՐՈՒՆ

Ամէն անոնք՝ որոնք անուշ ջուր, տաք միթնոլորտ, մաքուր սպաս, և կրկիկ սպասարկութիւն կը փնտռեն բազմիքի համար, միմիայն կը յանձնարարենք Սկիւտարի Ալթու-նիզատէի բազմիքը, որուն նորոգութիւնները աւարտած ըլլալով՝ ամէն օր ահագին բազմութիւն մը հոն կը դիմէ լուացուելու համար: Սկիւտարցիներուն աչքը լոյս, օգտուեցէք առիթէն:

ԻՆՉՊԷՍ ԾՆԱՅ ԵՍ

Ընդայ ու ընդայ, մինչեւ որ ինկայ
Հոգիս բերնես դուրս ելաւ ապամայ:
Կոնք մը ջուրի մէջ դրին զիս լետոյ,
Քիչ մըն ալ օճառ օ սք Գօլօնիոյ:

Հուացին չորսդիս, գաղջ անուշ ջուրով,
Ու հակափորիս հաս մըն ալ ուժով.
Ապսակ մը զարկին փափուկ ձեռներով,
Որ ապագային չըլլամ ամօրով:

Այդ կերած ծեծիս չի հանդուրժեցի,
Նուագս թող տուի, ձայնովս կանացի,
Ընդայ ու ընդայ, անհասնում ընդայ,
Մինչեւ որ ալ մօրքս ես գիրկը ելայ:

Թօնալու ու մօնալու, ծիծէն անյագուրդ,
Ծրծել սկսայ, ու ձեռնովս ալ ցուրս,
Զարկի ու զարկի: Կարծես քէ քսբուկ
Կը զարնէի ես, խելովս խեղճուկ:

Բարեկամներ շատ, դրացիներս հոն,
Ամենեմ ալ մօրս կ'աւեհէին ձօն՝
Թէ մանչդ աղւոր է ու բարի զաւակ,
Միշտ խերք տեսնաս, չ'ըլլաս խայտառակ:

Աղջիկ մ'ալ այնքան ուրախացաւ որ,
Զիս գիրկը առաւ, գրկեց պինդ աղւոր,
Ու բազուկներես կրծեց հոգեթով՝
Կարծես ճօրի էր, կամ կը թրեք սով:

Նորէն սկսայ պօռալ ու կանչել,
Կից մըն ալ տուի դեմքին անարգել:
Այս անգամ սակայն ծեծեցին ինձի,
Ծեծ մը որ յաւէ՛ս չի մոռնամ պիտի:

Այսքան տառապանք փաշեր եմ տա՛ն,
Բայց մայրս ալ ուրախ յոգներ է գիտնալ,
Այսպէս դուք ալ երբ, օր մը մարդ ըլլալ,
Ձեր մօրն երախտիք երբեք մի մոռնալ:

ՄՏԵՎԱՆ ԽԱԶՈՒՆԻ



ԴԱՐԱԶԿՍԻԿ ԲԱՌԱՐԱՆ

Բ

Բարեկենդան. — Ժամանակամիջոց մը՝ որուն միջոցին կը խառնուի շատ ապուր, ու կեփուի շատ թան։

Բարեկամ. — Սալթային վրայի իւրը, որ երկու խոշոր պատառ թաթխուելուն իսկոյն կանհետի։

Բարբախ. — Անուն մը որ թէ պատկանելի ու ակնածելի գումարներու տիրուտանքին անունն է և թէ ժամուն ժամկոչ եղբորը։

Բարձ. — Բան մը՝ որ խնայողութեան համար միւլետեքի ալ կը գործածուի, շատ անգամ առանց տէրպապայէն հրաման առնելու։

Բաղդ. — Ծոյլերուն ակնկալածը, աղջիկներուն սպասածը ու իմ հարստանալուս միակ սահը, ուղին, շաւիղը ու ճամբան։

Բամբասանք. — Պարապ մարդոց ու անճարակներու մխիթարանքը, ջատուկներու ու քառանամենի խառնադաշտաւարս օրհորդներու հաճոյառիթ խօսակցութիւնը։

Բարիգ. — Տեղ մը կամ քաղաք մը՝ ուր ոչ ես գացած եմ՝ ոչ ալ քեյգիս տղան։

Բարեւ. — Բան մը որ աշխարհիս ամէնէն կծծի մարդը առատօրէն սիրայօժար ու ձրի կուտայ։

Բարոյական. — Սեւ խավեարին պէս բիւացան սղած ապրանք մը։

Բամպակ. — Տեսակը շատ ապրանք մը. (տե՛ս Մարդիկ և իրք)։

Բարեկեցիկ. — Դրսերեւոյթէն միայն երեւելի բան մը։

* * *

Գ

Գարի. — Հիւթը բանականներուն, նիւթը անբաններուն։

Գաւազան. — Ծերերուն նեցուկը, հին վարժապետներուն կրթութեան գործին, երիտասարդներուն ձեռքի զարդը, էջերուն խալիմը։

Գազան. — Կենդանի մը տեսակներով ալլազան։

Գլխացաւ. — Տեսակաբազում ու զմեռազանակերպ հիւանդութիւն մը։

Գովաբանութիւն. — Շատ անգամ ձրի զրպարաութիւն. (տե՛ս դամբանականները)։

Գոյն. — Մինչեւ որ դուրս չիտայ յայտնի չըլլար։

Գաղճիք. — Գեղի կըսեմ մարդու մըսեր։

Գալափար. — Բան մը ուրկէ երբ շատ առնես կոտանաս կաղապար մը։

Գանձանակ. — Էօֆ, բիւֆ, օֆ, սէֆ, աման, զաման։

Գարեգին. — Թեյգիս տղուն անունը։


Գոռոզութիւն. — Զիւնաբեր հողմունք. (տե՛ս Հիւանդանոցի օրացոյցը)։

Նիւթք

ՌՈՄԱՆՈՍ



ԽՈՐԷՆԻՆ ԽԵԼՔԸ



Այրի մայր մը զաւակ մ'ունէր
Որ բաւական խայրարդ էր
Միտ կը խմէր, ցորեկ գիշեր,
Չունէր իր քան կըսուր մը խեր։

Դուրսըն ըլլար կամ քէ ի տուն,
Թէ՛ փուն ըլլար եւ կամ արքուն,
Բախտըն էր միտ երազուն,
Եւ պոռչքար իրեններուն։

Ու գիշեր մը նաւի ասեմ,
Հառաչելով սրտին խորեմ
Մայր կ'ըսէ — «Օրդիս խորեմ
Հիջ չխնդացի փու կոնակեմ»։

Ասոր վրայ տղան կ'ելլայ
Մայր կ'առնէ կոնակեմ. ապա
Երբ կը մարի կիներ քան, քան
Կ'ըսէ — «Իջե՛ մարիկըս քան,
Նա՛ ուզածիդ խըսար խընդա»։

Վ.Ս.ՀՐԱՄ ՍՐՎԱՆԾԱՆ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Ստոյգ աղբիւրէ կիմանանք թէ՛ սեմաօլիսդ բանաստեղծներու եռոտանին, որոշած է Զատկի առթիւ միանեւքօթիւմներ հազնիլ անգոյն, իրենց ոտանաւորներուն յանգոյն: (Տուպլը Ֆաս առէք, յաջորդ տարին թէրս-չիտակ ընելու համար, s'il vous plait! Ծ. Խ.):

ՍԿԻԻՏԱՐ. — Ժամկոչին ձեռքը համբուրելու չափ — անշուշտ մեռելը լուալէն ետքը — հաւատով տիկին մը, ներկայ մեծ պահքին, փոխանակ լուրիայ ուտելու՝ հարսին միսը ծածմեղով կանցունէ կոր, ի՞նչ կըսէք: (Միս կերցնող հարսեր կա՞ն որ հիմա... չօք չէ՞, ... Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Տեղացի կարգ մը պիգ-պիս միւսիւններ, ի հիճուկս Բերայիններուն, որոշած են ութը ձայնով քաֆօ Ֆօնի մը պատրաստել ... մայիս մէկին Ալէմ-տաղիի եկեղեցին երգելու համար: (Մայիսքո Մանաս... կիմանա՞ս. Ծ. Խ.):

ՍԱՄԱԹԻԱ. — Անցեալ օրուան Մանգումէի մէջ յիշուած, շնորհունակի մը՝ աղքատ տղու մը ականջէն քաշելը գրուած էր թէեւ, բայց պատճառը չէր յիշուած. այս անգամ ստոյգ աղբիւրէ կիմանանք թէ՛ տէրպապին միտքը ... իր ականջներուն չափ մեծցնել է եղեր մինիսիկին լսելիքները:

ԳԱՏԸ-ԳԻԻԴ. — Տեղացի օրիորդ մը որ տարիէ մը ի վեր նշանած է, առաջարկեր է խօսեցեալին, որ եթէ տունէն եկեղեցի՝ եկեղեցիէն տուն օրօֆօպիլ չի նստեցնէ, չպիտի ամուսնանայ երբէ՛ք և երբէ՛ք ... (Բաթ կըլաս նօնօչիկս, բաթ կըլաս ... Ծ. Խ.):

ԲԵՐԱ. — Ամբողջ Բերան շաքար ի բերան պէսէք դարձած է այս օրերս, շնորհիւ երեք սինկաթօկոնաճներուն, որոնք պղտիկներու համար յղացուած թէեւ՝ սակայն խոշոր քուքլաներու գրօսանքի ժամադրավայրը եղած են տիւ և գիշեր:

ՆՈՅՆ. — Բանկալթիի կողմերը տան մը խելացի օրիորդը, բերի կելլայ կոր ըսելով՝ ծնողքը վախցունելէ և սենեակին մէջ խասխաթի ընել տալէ վերջ՝ ինքը գիշերանց միւսիւններ կընդունի կոր եղեր դրանը քովի սենեակը: (Պռավօ օրիորդ, ճիշտ ատենն է, արդէն ոգիներու հարցը խնդրոյ նիւթ եղած է նայն իսկ Լոնտոն. Ծ. Խ.):

ՍՐԱՄԻՏ ԶՐՕՍԱՆԲ

ԼՈՒԾՈՒՄ

Մեր նախորդ Սրամիտ Զրօսանքին լուծումը որ էր՝

Ա. Ղ. — Մ Ո Ւ Կ

Ճիշտ լուծած են՝ Օր. Մէլինէ Զաւուշեան, աշակերտուհի Անարան Յղութիւն վարժարանի ի Բանկալթի, և Տեարք՝ Վահան Վարդանեան, Նիկոմիդեայէն՝ Օ. Յ. Պաղտասարեան, Նուպար Պետրոսեան, Լեւոն Թումանեան, Խաչիկ Մէնզիլեան:

Որոնցմէ՝ Նուպար Պետրոսեան վիճակաւ կստանայ խոստացուած կաղամարի կազմուածքը: Կը խնդրուի յիշեալ Պարոնէն՝ Խմբագրատուն գալով ստանալ նուէրը:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Օրտու. — Յ. Զ. ստացած ենք բաժնեգիրները մէկ Օսմ. Ոսկի:

Սըվազ. — Ա. Թ. ստացած ենք բաժնեգիրներ:

Պրուսա. — Լ. Հ. բաժանորդագրութիւնն իրդ լրացած է:

Գօնեա. — Ա. Օ. նոյնպէս:

Տիարպէքի. — Խ. Խ. նոյնպէս:

Կիրասոն. — Խ. Է. նոյնպէս:

Ճէրահ. — Ե. Ա. նոյնպէս:

Տրապիզոն. — Տ. Մ. նոյնպէս:

Էտիրնէ. — Կ. Թ. նոյնպէս:

Մեր վերոյիշեալ Պատ. Բաժանորդներուն կը ծանուցանենք որ հաճին ընդհուպ մեզ ուղարկել բաժանորդագիրներն՝ եթէ թերթերը չարունակել կուզեն:

Արժօնաւոր ԱՐՄԻՆ ԼՈՒԾՈՒՄ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի Գաւսէսի քիւ 52.

ՄԵԾ Վ ԱՃԱՌ-ԱՏՈՒՆ

ՀԱՆՈՑՐԱՅԵՐԱՅԵՐ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Համալ, Թոփապեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիններէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկունութեամբ և գիներու անմրցելի
աժանութեամբ շահած է բոլոր իրեն
գիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բոլորիներու
և տղայոց շիք և գիմացկուն փոքրիկ-
ներու ճոխ միջերք մը պատրաստ ունի,
որ շերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի և ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—26



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղք պէյ խանիմ
եակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյրանէ,
Ձինասանէ, Հնդկասանէ, Ճալաէ եւ Ճա-
րոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ և փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համալ տարեկան բաժնեգին	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց համալ	»	»	27 »
Արսասանման	»	»	6 ֆր.

Կ Ա Ն Խ Ի Կ

ՀԱՍՑԷ՝

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ, Պապր-Ալի հասսէսի Աստուրեան տպարանի քիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր լին ցոյց տան
թէ միշտ նոր բաժանորդներու անունին և հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Դրամները պէտք է զրկուին կամ Օսմ. Մանտարութով և կամ բոսթայի փութով 20 Դրամ
20 դրուշի հաշուով:

ՊԱՀՔ

Ամենքնիս ալ պահք բռնելու ետե՛ք ենք. ասիկա կը հարցնենք մենք մեղի. բայց քիչ մը մտածելէ ետքը, նորէն մենք մեղի կը պատասխանենք թէ՛ ո՛չ, մենք պահք բռնելու ետեւէ չենք, քանի որ, չենք կարգար Թ. Գրքնանի ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ, թէ՛ առաւօտեան և թէ Ս. Պատարագի, որոնք երգելով է որ Մեծ Պահքը մեծ համբերութիւնով կրնանք անցընել և այս միակ գիրքն է որ կրնայ կորուսեալ հոգիները փրկութեան մէջ առաջնորդել: Գրքնանի գրատունը ամէն Հայ Առաքելական զաւակներու տրամադրութեանը տակ դրած է այս հոգեւորագ գիրքը՝ ի գին... 60 փարայ: Կեդրոնատեղին՝ Զագմազմար Գրքնանի Գրատունը՝ թիւ 25:

Սոյն գրատունը նաեւ 1907ի եւ 908ի Հանրագիտակի բացառիկ թիւերուն միակ կեդրոնատեղին է:

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՄԱՏԱՄ ՃԱՆԻԿ ՔԵՍՃԵԱՆ

3 Պահչե-գաբու թիւ 3

Սոյն վաճառատուն մէջ պիտի կըրնաք գտնել այն ամէն չիք, տոկուն և աժան առարկայները, որոնք Թօհաֆիյէի մաս կը կազմեն: Անգամ մը այցելելը համազում պիտի կրնայ գոյացնել թէ ուրիշ ո՛ր է և է տեղ չպիտի կըրնաք գտնել նոյնքան ճոխ մթերք մը այն բնառուած սրթի օլօին վրայ:

10—10

ԳԱՌՆԻԿ ՔԵԾԻՇԵԱՆ

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. Պոլիս Հանօ-Բուլօ խան իթւ 2

Նախ փորձառուները, յետոյ խաբուողները միայն գիտեն էթ ո՛րչափ դժուար է, դտնել ու գնել ապրանքներ՝ որոնք թէ տոկուն ըլլան՝ թէ ճաշակաւոր և թէ . . . աժան:

Դառնիկ Դէշիշեան վաճառատունը Թօհաֆիյէի էն առաջնակարգ Եւրոպական գործարաններէն բերել տուած է տեսակ տեսակ կանանց և արանց յատուկ Ֆանելաներ, գուլպաներ, քաւիկնակներ, ձեռնոցներ, փողկապներ, բոդեղներ, Ֆիլիսոս և խիստ ճաշակաւոր ներգնաւապիկներ, գլխու շարքեր, քաւիկներ և ինչ. և ինչ.

Ջերմապէս կը յանձնարենք անգամ մը այցելել այդ վաճառատունը, ուրկէ անպատճառ գոհ մնացողներ միշտ հոն դիմելով պիտի հաստատեն թէ՛ գիներու աժանութեան, տեսակի ազնուութեան և ապրանքի տոկունութեան երեք առաւելութիւնները ուրիշ ո՛ր է և է տեղ կարելի չէ գտնել:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔ

Արդի Հայերէնի լաւագոյն առաջնորդները

1. — Տարրական Քերականութիւն արդի Հայերէնի, նոր ոճով 2 զրուշ.
2. — Լրացուցիչ (Տարրական կարգերու տանկան գիրք) 3 զրուշ.
3. — Նոր Քերականութիւն (գործնական եւ տեսական) 4 զրուշ.

Ամէն ուսուցիչ այս գիրքերով կրնայ դաս տալ. — ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ ԱՆՎՐԷՊ Է:

Դիմել՝ 47 Պապր-Ալի Գասսէի, որ կեդրոնատեղին է Դաւթեան հրատարակութիւններուն: